

«Ձայն բարբառոյ յանապատի, պատահաւ արարէ՛ք
գնանապարհ Տեառն եւ ուղիղ արարէ՛ք զշաւիղս
Աստուծոյ մերոյ»: *

Յովհաննու քարոզութիւնն մեծ իրարանցում յառաջ
բերաւ ժողովրդոց մէջ և ամէն մինն գալիս էր իրեն մեղ-
քերն խոստովանում, իրեն ցաւերին սպեղանի խնդրում,
որ բժշկուէին և կարողանային մկրտուելով արդարանալ։
Նոքա հարցնում էին՝ ի՞նչ անել, որ ունենան արժանի պատուդ
ապաշխարութեան։ Յովհաննէս մի շատ դիւրին միջոց էր
ցոյց տալիս, նոցա, որ հարստահարուած էին և զրկանքների
տակ ճնշուած հեծում և հառաչում էին, պատուիրում է
միմեանց օգնել և կարեկցել. «Ոյր իցեն երկու հանդերձք
տացէ զմին այնմ է, ոյր ոչ գուցէ, և ոյր կայցէ կերակուր՝
նոյնպէս արասցէ»։ Մաքսաւորներին, որոնք աւելի հա-
րստահարիչների կարգիցն էին, պատուիրում է. «Մի ինչ
աւելի քան զհրամայեալն ձեզ առնիցէք». իսկ զինուոր-
ներին, որոնք պաշտօնեայր էին տէրութեան, և նոցա զէնքն
ամէնքին սարսափ էր ազդում, պատուիրում է. «Մի զոք
խուիցէք, և մի զոք զրպարտիցէք. շատ լիցին թռչակքն ձեր»։

Եթէ հասարակ դասակարգն միմեանց օգնէ, չթողնէ
իրեն մէջ կարօտեալ, անկասկած այդպիսով կաւկասի
թէ կարօտեալների թիւն, և թէ կարեկցութեան, ըն-
կերսիրութեան և հաւասարութեան ոգին կթագաւորէ։
Եթէ հարկահան, մաքս պահանջող մաքսաւորներն օրէնքով
հրամայուածն միայն պահանջեն, ժողովուրդն կաղատուի
հարստահարութիւնից և կեղեքումից, և կը կատարուի
զրկանքի գէմ գրած օրէնքն. «Մի զրկեսցես զընկերն քո,
և յափշտակեսցես»¹⁾, որով կրկին ընկերսիրութիւնն կթա-

* Տես «Աբարատ» Յունուար էջ. 18.

1) Ղևտ. ԺԹ 13.

դաւորէ։ Եւ եթէ զինուորներն իրենց թոշակով շատանան
 և չարաչար չգործածեն պաշտօնն, այլ համարեն զիրենք
 ևս ինչպէս ժողովուրդ և պատկանող նոյն դասակարգին,
 կլերանայ ժողովրդոց միջից ամէն տեսակ զրկանք, չար-
 չարանք, հալածանք, բանտ, կապանք, կեանքի և ընչից
 դաւաճմն, և այսպէս ամէն խորդ ու փոթ ճանապարհ-
 ներն հարթուած և դժուարինք դիւրացած կլինին, քար-
 քարոտ տեղերն գեղեցիկ դաշտ կդառնան, որով դարձեալ
 սիրոյ օրէնքն կթաղաւորէ և կառաջանայ ընկերասիրութիւնն։
 Յովհաննու առաջարկած երեք միջոցներն էլ ամենալայն և
 արձակ մարդասիրական սկզբունքներ են, պարզ և գործնա-
 կան, և ոչ ձևական, ինչպէս փարիսեցւոց, սադուկեցւոց և
 դպրացն էր, որով հետեւողներն պատրաստ և կազմ ժողո-
 վուրդ կլինէին՝ օժտուած ամէն բարեմասնութիւնով։ Այս
 առաջարկած գործնական միջոցների գործադրութիւնն և
 պահպանութիւնն կհեռացնէր մարդկութիւնը ստրկացնող
 և մեռուցանող ուղղութիւնից, որի մէջ ժողովուրդն հե-
 ծում և հառաչում էր՝ հարստահարուելով, զրկուելով
 իրեն արդար իրաւունքից։

Նորա արդար բողոքներին և պահանջներին ոչ միայն
 բաւարարութիւն տուող, այլ լսող անգամ չկար, և ով
 պէտք էր արդար դատ տեսնէր, մինչդեռ անողներն հէնց
 նոքա էին, որոնցից արդարութիւն և իրաւունք էին սպա-
 սում։ Աշխարհս այդպէս է. վաղն եթէ նոյն իրաւունքն մի
 ուրիշի ձեռքի լինի, նա ևս պէտք է այնպէս վարուի. և
 այսպէս, այսօրուայ անբաւականն, արդարութիւն և իրա-
 ւունք պահանջողն, վաղն կարող է դառնալ արդարութեան
 և իրաւունքի ոտնակոխ անողն, և աւելի հարստահարող,
 զրկող և հալածող։

Մաքսաւորներն իրենց ընչասիրութեամբն և հարստա-
 հարութեամբն, ինչպէս յայտնի է, իսրայէլացւոց մէջ ա-
 մենաանարգ, փչացած և մեղաւոր համարուածներն էին,
 որոնցից խորշում էր ժողովուրդն, ինչպէս վարակիչ հիւան-
 դութիւնից և ժանտախտից։ Նոցա չէին ողջունիլ, նոցա
 հետ հաց չէին ուտիլ, նոցա փոխ չէին տալ, և նոցանից

փոխ չէին առնիլ, որովհետեւ մեղաւոր էին: Ո՛չ թէ նոցա մեղքերն այնքան չափազանց ծանր էին, ո՛չ. բազդատելով ժողովրդոց շատերի հետ, թերեւս նոցանից արդար լինէին. բայց բանը նորանում էր, որ նոքա աւելի ազգային դաւաճանի պէս էին համարուած իրենց պաշտօնով: Իսրայէլացւոց համար խիստ ծանր էր օտարին հարկ վճարելն, մանաւանդ հեթանոսներին, ինչպէս էին հռոմայեցիք, որոնց իշխանութեան էին ենթարկուած, և երբ այդ կատարուում էր իրենց մարդկանց ձեռքով, կատարողն պէտք էր հետեւապէս նոցա ատելութիւնն վաստակէր: Արդեօք մաքսաւորներն ինչպէս կվարուէին նոցա հետ մաքսերն և հարկերն ժողովելու ժամանակ. անպատճառ խիստ բռնութեամբ, հարստահարելով և զրկելով՝ աւելի խեղճ ժողովրդոց, որոց ձայնն խեղտուած էր միշտ զօրեղի մօտ. զրկանքն արդէն յատուկ էր մաքսաւորներին, ինչպէս երեւում է Զաքէոս մաքսապետի պարզ խոստովանութիւնիցն՝ Յիսուսին իրեն տունը ընդունած ժամանակ. «Եւ եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին»¹⁾:

Յովհաննու խօսքն դէպի այս մաքսաւորներն՝ էր. «Մի աւելի ինչ, քան զհրամայեալսն ձեզ առնիցէք», ասել է թէ օրէնքով ինչ որ հրամայուած է ձեզ, նորանից աւելի ոչինչ չառնել: Այս խօսքերն պարզ են և անմիճելի:

Յովհաննու գլխաւոր խրատն դէպի ժողովուրդն ընդհանրապէս՝ որոնք եկած էին մկրտուելու, այն խօսքն է թէ. «Ոյր իցէ երկուս հանդերձս տացէ զմինն այնմ, ոյր ոչ գուցէ, և ոյր կայցէ կերակուր նոյնպէս արասցէ»: Այս ժողովուրդի մէջ աւելի աչքի էին ընկնում փարիսեցիք և սադուկեցիք՝ երկու միմեանց հակառակ ուղղութեան մարդիկ, որոց գործերն թէ որքան համապատասխան էին իրենց վարդապետութեան՝ բաւական է յիշել Յովհաննու այն խիստ յանդիմանութիւնն. «Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոց և ի փարիսեցւոց եկեալս ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա. ծնունդք իծից, ո եցոյց ձեզ փախչել ի բարկութենէ որ

1) Ղուկասու դէ. ԺԹ. հմբ. 8.

գալոց է. արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան¹⁾։ Իժն օձերի մէջ ամենաթունաւոր և ամենալուսաւորն է. այդ պատճառաւ չարագոյն և ֆիասակար մարդկանց այդ անունն է տրուում, իբրեւ յատկանիշ նոցա բնութեան։ Երևում է, որ փարիսեցիք և սադուկեցիք իրենց գործերովն կամ ներքին յատկութիւններովն պակաս չէին թունաւոր իժից, որոց յանդիմանում է ասելով, ո՞վ ցոյց տուաւ ձեզ փախչել այն բարկութիւնիցն որ դալու է. կամենում է ասել թէ՛ մկրտութիւնով չէք կարող ազատուել, պէտք է ապաշխարութեան արժանի պտուղներ ունենաք։

Յայտնի է որ սադուկեցիք չէին ընդունում ոչ հանդերձեալ կեանք, ոչ յարութիւն մեռելոց, ոչ հրեշտակաց գոյութիւնն, և ազատ էին իրենց անձնիշխան վարդապետութեան մէջ. այդպէս կոչուում էր ժամանակի քահանայից դասակարգն, որոց մէջ աչքի էր ընկնում Կայիափա քահանայապետն։ Իսկ փարիսեցիք նոցա հակառակ օրինապահ էին, Հին կտակարանի օրէնքներն ամենայն ճշտութեամբ արտաքուստ պահող էին երևում, մանաւանդ տասանորդական տուրքերի օրէնքն. ամեն մանր բաների մէջ զգուշաւոր էին այնքան, որ քացախն ջրի հետ խառնելու ժամանակն կքամէին, որպէս զի մողովն, որ անտուրբ կենդանի է՝ կուլ չգնայ։ Նոքա համարում էին իրենց աւելի արդար քան ուրիշներին, ծերոց աւանդութիւններն հաւատար Հին կտակարանի էին ընդունում և դեռ աւելի մեծարում, ինչ որ իրենց նպատակին և օգտին յարմար էր։ Այս երկու դասակարգի Յովհաննու մօտ մկրտութեան համար գնալն, անկասկած, ի սրտէ չէր, ինչպէս միւսներինը՝ այլ կեղծաւորութիւն, քանի որ ինչպէս Աբրահամու որդիք նոքա ազատ էին համարում իրենց և արդար։ Ուստի Յովհաննէս պահանջում էր, որ անպատճառ ապաշխարութեան արժանի պտուղներ ցոյց տան։ Թէ փարիսեցիք, թէ սադուկեցիք և թէ մնացեալ ժողովուրդներն հաւատար մի ճանապարհաւ պէտք է ցոյց տային այդ, ում ունէր երկու

1) Մատթէոս գլ. Գ. հմբ. 7, 8.

Հանդերձ, տար մինն նորան՝ որ չունի, կերակուր ունեցողն նոյնպէս անէր։ Այստեղ գործեր է մէջ բերում, որ պէտք է կատարել, և ոչ խօսքով պարծենալ, թէ Արրահամու որդիք էնք. և այս խօսքերն արծարծում էին գթութեան նուիրական և բարերար միտքն, իսկ գթութեան հետ կմտնէր հաւատարութիւն։

Ինչպէս ձորերի մէջ ճանապարհների դժուարութիւն է նոցա խորդ ու փոթ լինելն, նոյնպէս ընդհանուր ժողովրդոց մէջ մի քանի դասակարգի բռնած ծուռն ու մուռ ուղղութիւններն են մնաս բերում. ձորերն կլրցուին, այն է, կարօտ դասակարգն կազատուի և հացալից կլինի՝ միմեանց օգնելով. խորդ ու փոթ ճանապարհներն կհարթուին՝ անիրաւների իրենց բռնած ուղղութիւնից հեռանալով և մարդասիրական հոգւով ղեկավարուելով. ամեն դժուարութիւններ կգլխաւորան, ինչ որ կարծում էին անկարելի է կարելի կլինի, երբ խստասրտութիւնն կմեղմանայ մարդասիրութեան առաջ, փափկասիրութեան տեղ կյաջորդի կարեկցութիւնը և հաւատարմասիրութիւնը, և քարքարոտ տեղերն կլինին դաշտային. այն ժամանակ, երբ Տիրոջ փառքն երևայ, կարող կլինին տեսնել նորա փրկութիւնը։ Յովհաննէս պատրաստեց և Յիսուս հարթեց դժուարութիւններն, դիւրութեան ճանապարհ բանալով մարդկութեան առաջ աներկիւղ ընթանալու։ Սուրբն Ինգնատիոս մեկնիչն Ղուկասու աւետարանի այսպէս է բացատրում Եսայի մարգարէի խօսեցած պատգամն. «Զի փոյթ եղև մարգարէից ոչ միայն վասն տեսնոն մարգարէանալ, այլ և վասն Կարապետի նորա։ Վասն որոյ ձայն զնա Եսայիաս անուանէ, բանալ զճանապարհս բանին յանապատէ եկեալ, պատրաստել զնալ ինմա և տեղի ընակութեան զօգիս մարդկան։ Ի սմին կարգի ցուցանէ զգորութիւն Քրիստոսի ընդդէմ՝ հակառակամարտ գորութեան, զի ընու զխորս ձորոց, որ են վիհք անհաւատութեան, որովք ըմբռնեալ ազգ մարդկան իբրև զհաւ ոչ զօրէին անցանել ի կեանս։ Արդ ընու, զի դիւրեաւ անցանելի լիցի ի ձեռն հաւատոց արդարութեան։ Հարթէ և զլեռնացեալ թագաւորութիւն սատանայի,

որ ամբարձաւ ի վերայ մարդկան: Առնէ և զգժուարինս և զանկոխ ճանապարհն առաքինութեան դիւրագնալի, որք կամիցին: Եւ զի ոչ կարէ այնուհետեւ առապարն արգելուլ զնոսա, և ամենեցուն տացէ զփրկութիւն իւր Աստուած՝ միայն թէ հաղորդեսցին փրկութեան¹⁾:

Յովհաննէս Մկրտիչն սկսեց իրեն վարդապետութիւնը աւելի խիստ քան թէ մեղմ՝ լեզուով: Նա շատ կարճ միջոցում՝ ճանաչեց փարիսեցւոց և սադուկեցւոց դասակարգն. նա իրեն վարդապետութեամբն չէր կամենում ժողովուրդ գրաւել իրեն կողմն, ինչպէս անում էին այն ժամանակուայ հեղինակաւոր ռաբբիներն և ուսուցիչներն, ինչպէս էին Հիլել և Շամմայն, և ինչպէս անում էին և անում են անցեալ և ներկայ դարերումս. նա ոչ մեծամասնութիւն կազմող փարիսեցւոց կողմն անցաւ, և ոչ սակաւաթիւ և ընչիւք փարթամ սադուկեցւոց կողմն, որոց գլուխ էր կանգնած Կայիափա քահանայապետն, կրօնական ղեկն իւր ձեռքին: Նորա վարդապետութիւնն խիստ պարզ էր և գործնական ամենեցունց համար. նա արդարութեան ճանապարհաւ եկաւ, և արդարութիւն, իրաւունք և ճշմարտութիւն էր քարոզում ամէնի համար: Ուրեմն այդ խիստ լեզուն, որ գործ էր ածում փարիսեցւոց և սադուկեցւոց դէմ, չպիտի հաճելի լինէր նոցա, այլ պիտի սաստիկ գրգռուէին նորա դէմ, վասն զի նոցա ինքնասիրութիւնը և նախանձն չէր կարող տանել այն հրապարակական յանդիմանութիւնը, որ նա ուղղեց նոցա, ինչպէս լինում է առհասարակ ամէն մի անձնաւորութեան դէմ, որ աներկիւղ խօսում է, ուսուցանում ճշմարտութիւն և պարսաւում և յանդիմանում է ստութիւնն, խաբէութիւնն և կեղծաւորութիւն սիրողին: Նորա վարդապետութիւնն ձեւական և առերես չէր. եթէ այնպէս լինէր՝ չէր յանդիմանիլ փարիսեցւոց և սադուկեցւոց խիստ լեզուով՝ անուանելով նոցա «իծից ծնունդ»: Նա աւելի գերադասում է արդարութիւն, իրաւունք և ճշմարտութիւն, քան արտաքուստ ոսկեղօծուած

1) Ինքնատիտ, Մեկն. Առկասու զԷ. Գ. հմբ. 2.

կեղծ օրինապահութիւն և աւանդապահութիւնն, կամ ընչիւք փարթամացած իշխանական ոյժ Իսկապէս Յովհաննէս Մկրտչի լեզուն զօրաւոր էր և ազդու, որ կարողացաւ մաքսաւորներին և մեղաւորներին ազդել, իսկ ճշմարտութեան և արդարութեան թշնամի փարիսեցւոց և սադուկեցւոց ինքնասիրութիւնը գրգռել իրեն դէմ:

Յաւիտենական ամենաբարին Աստուած իրեն նախասահմանութեամբ ազդերի գործերն ուղղել է, և նոցա առաջնորդել է աստիճանաբար դէպի բարին՝ իրեն հաւատարիմ սլաշտօնեաների ձեռքով: Եսայի մարգարէի բերնով խօսեց ապագայի համար, թէ անապատի մէջ խօսող մի ձայն պէտք է լինի, և ահա այն անապատի մէջ խօսող ձայնն եօթն հարիւր տարուց յետոյ քարոզում է. «Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցել է երկնից թագաւորութիւնը». ժողովրդոց պատուիրում է ապաշխարութեան արժանի պտուղներ առնել, մաքսաւորներին յիշեցնում է հրամայումը օրէնքից աւելի ոչ ինչ չառնել, զինուորներին հասկացնում է ոչ ոքի չքաշքշել և չչարչարել, չզրպարտել և բաւականանալ իրենց թոշակովն: Մաքսաւորներն և մեղաւորներն ապաշխարեցին և դարձան իրենց գործած չարիքներիցն. նոքա կատարելով Յովհաննու պատուէրն, սրտով և հոգւով եղան արքայութեան որդիք և պատրաստ ժողովուրդք, որոց օրինակ վեր առնելով Յիսուս խորայէլացւոց քահանայապետներին և ծերերին յանդիմանում է ասելով. «Ամէն ամէն ասեմ ձեզ, մաքսաւորք և պոռնիկք յառաջեցին քան զձեզ յարքայութիւն երկնից: Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան, և ոչ հաւատացէք նմա, և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա. և դուք տեսէք և ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա»¹⁾: Այս ուղիղ ճանապարհին հետևելով մենք ևս քրիստոնեայքս չպէտքէ բաւականանալ միայն աւագանի մկրտութեամբ, թէ փրկուած ենք, այլ պէտք է մեր միջի ամէն մի դասակարգն իրեն պատկերն տեսնէ վերն յիշուած երեք դա-

1) Մատթէոս 44. ԻՍ. հմբ. 31, 32.

նակարդ հրէից գործերի մէջ, և հետեւի Յովհաննու քա-
րոզած պատուէրներին, և ապաշխարութեան արժանի
պատուը ցոյց տայ. որպէս զի Տիրոջ փառքն և նորա փրկու-
թիւնն հասած ժամանակն պատրաստ ժողովուրդ լինի,
նորա ձրի շնորհքներն ընդունելով իմաստուն կուսանացնման
լի իւղով վառեալ լապտերներով ընդառաջէ անմահ Փե-
սային, որ է օրհնեալ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյն յա-
ւիտեանս. ամէն:

Անանիա Եպիսկոպոս



Դարձեալ Զուարթնոց Եկեղեցի *

Մեզ մնում է մասնանիշ անել Յուսիկ սրբազանի յօ-
դուածի մէջ նկատած մի քանի սխալների և թիւրիմացու-
թիւնների վերայ:— Հակառակ Հ. Ալիշանի՝ նա կարծում է,
որ Տիրորի եկեղեցին պէտք է շինուած լինի ոչ Յովհան Ման-
գալունու, այլ Յովհան Բագարանցի (Աւանեցի) հակաթոռ-
կաթուղիկոսի օրով. բայց բերած փաստերը տարօրինակ են:
Եկեղեցու արձանագրութեան մէջ «Ներսէհ» անուն չկայ.
իսկ Յունաց կայսեր դէմ ապստամբած Սարգիս Վահեւունի
սեպուհը՝ յոյն Հերակլ և հայ Համագասպ Մամիկոնեան զօ-
րավարներից ձերբակալուելով ու մահուան պատիժ կրելով,
սուրբ չ'ը դառնայ և ժամանակակից, Յունաց իշխանութեան
ներքոյ գտնուող, կաթուղիկոսի հետ մի եկեղեցւոյ արձանա-
գրութեան մէջ իբրեւ սուրբ յիշուի՝ այն պատճառով միայն,
որ իբրեւ ծեր մարդ երիտասարդ ազգականի՝ մահը չի կամե-
ցել տեսնել և խնդրել է առաջ իրեն գլխատել: Եթէ «և
սրբոյ Սարգսի» ուղիղ ընթերցուած է, ապա անշուշտ յայտ-
նի ս. Սարգսի մասին է խօսքը, որի անունն և նուիրած է
եկեղեցին և որի բարեխօսութեան գիմում է կառուցանողը:
Ուրիշ «անձնուէր» Սարգիսներ ինչ գործ ունէին այստեղ:

* Շար. տես. «Արարատ», Յունուար էջ 38: